



ՀԵՐԱԹԱՓՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱՆՈՒՄԸ. — (Հ. ՀԱՄԱ). — Կարելի չէ մոր մազ բուսցնել արդեն իսկ ճաղատ մասերում վրայ, բայց կարելի է հերաքափութիւնը, դադրեցնել, հետեւաբար կանխել կամ սահմանափակել ճաղատութիւնը: 2. — Յամախակի մազ կտրելը, մազերում ծայրը այրելը եւ սափրիչներու յանձնարարած զանազան միջոցները ունէ՛ օգուտ չունին. յամախակի լուացումները մանաւանդ զօրաւոր օճառներով եւ shampoing ներք կրնան վնասակար իսկ ըլլալ, որովհետեւ մազերը դիւրաբեկ կը դարձնեն: 3. Հերաքափութեան դէմ յանձնարարուած դեղերը բազմաթիւ են. օգտակար են անոնք որ կը պարունակեն ծծումբի, կոշպրի եւ մասամբ սնդիկի բաղադրութիւններ: Հետեւեալ դեղերը, զորս իբրեւ օրինակ կուտանք, յանձնարարելի են: Ունէ՛ հերաքափութեան դէմ առաւօտները կարելի է գործածել (ամէն օր կամ երկու օրը անգամ մը) հետեւեալ օճաջուրը. — ա) *Chl. de pilocarpine 0,50, chl. de quinine 1, acide acétique 2, teinture de cantharides 2, alcool camphré 100, eau distillée 300 gr.*: Երբ հերաքափութեան կ'ընկերանայ թեփը, ա. օճաջուրին հետ, իրիկումները գործածել հետեւեալը. — բ) *résorcine 0,50, goudron purifié կամ huile de cade désodorisé 4, polysulfure de K liquide 10, eau de Cologne 100 gr.*: Թրջել բամպակի կտոր մը եւ ուծեղ շփել հերամորթը, շաբաթ մը ամէն իրիկուն, շաբաթ մը 3 անգամ, շաբաթ մը 2 անգամ, յետոյ 8-10 օրը անգամ մը: Եթէ հերաքափութեան կ'ընկերանայ ճարպածորումը, կարելի է գործածել կամ բ. օճաջուրը կամ հետեւեալը. — գ) *Sulfure de carbone 150, soufre précipité 5 gr.*, վերոյիշեալ ձևով և պարբերականութեամբ, բայց կրակէ, բոցէ հեռու. մէկ վայրկեանի չափ սաստիկ կը կսկծեցնէ ու յետոյ կ'անցնի. շարունակել ա. օճաջուրը բ.ին կամ գ.ին հետ, կամ առանձին երէ թեփ կամ իւղ չկայ: Եթէ մազերը շատ չորնան, օծել 1-2 կաթիլ *brillantine* "4: 8-10 օրը անգամ մը գլուխը լուալ օճառով, ճախընտրաբար *savon cadique* ով, կամ *bois de panama* ի խաշուկով: Ամէն պարագայի, դարմանումը շարունակել ամիսներ, մոյնիսկ տարիներ, փոխելով դեղերը, եթէ պէտք ըլլայ: 4. Անոնք որ ճարպածորում ունին պէտք է քիչ ուտեն՝ ճարպ, միս, համեմներ, պահածոներ — դանդաղ ճաշեն, լաւ ծամեն — զգուշանան պնդութենէ, սեռային, մտային յոգնութենէ, չափազանց կերուխումէ, ոգելից ըմպելիներէ — եւ վերջապէս իրենց կազմը փոխեն մարգանքով, մաքուր օդով, եւայլն: 5. Օտը-Քօլօնը մազերը չի ճերմկեցնէր եթէ ճերմկելու տրամադիր չեն: 6. Թերթերում մէջ ծանուցուած այն դեղերը որոնք ճաղատութիւնը արմատապէս բուծել կը խոստանան, միամիտ յամախորդին դրամապանակը միայն «բուծելու», պարպելու կը ծառայեն...

Փ. — ՆԻԿՈՍԻԱ. — Զեք գրած թէ ո՞ր հիւանդութեան համար երիկամունքի գործուղութեան ենթարկուած էք: Եթէ քաղ հանած ենք էականը աւագախտի դէմ

սննդապահութիւնն է: «Երկկամումբը գորացնող մասնաւոր դեղ» չկայ: Իսկ ամոր գործունէութեան մպաստաւոր դեղերու ընտրութիւնը, հիւանդութեան տեսակէն կախում ունի:

. . . ԲՈՒՄԱՆԻԱ. — Ենթադրելով որ ախտաճանաչումը լաւ կատարուած է եւ ձեր ունեցածը *lupus tuberculeux* է, այդ հիւանդութեան դարմանումը երկար կը տեւէ եւ ամբուժելի չէ: Միայն թէ քանի մը մերարկում մէկ բժիշկին, քանի մը մերարկում ուրիշ բժիշկի մը ընել տալով եւ երբորդի կամ չորբորդի մը դեղագիրները գործածելով չէ որ կարելի է բուժուիլ: Մասնագիտական լուրջ, յարատեւ եւ երկարատեւ դարմանում կը պահանջէ այդ հիւանդութիւնը: Նախ մերսէս առնուած դեղերով եւ լաւ սնունդով մարմինը պէտք է գորացնել եւ հիւանդութիւնը առաջացնող մամբէն (Ռոյսի մամբէն որ քիւլեբրֆիւօզի մամբէն է) կերպով մը տկարացնել. այդ մպաստակով գործածուած գլխաւոր դեղերն են, ոսկիի բաղադրութիւններ (երակային մերարկում) և *solution de Jacobson* պատրաստութիւնը (ենթամորթային մերարկում): Իսկ դուրսէն, հետեզետէ պէտք է փնացնել մորթին մէջ թաղուած հիւանդութեան բոյները՝ մշորակով, այրելով, արեւի կեղրոնացեալ մառագայթներով կամ արուեստական մառագայթներով (*finsentherapie*)։ Այս զանազան միջոցները կրնայ կիրակել կարող մասնագէտ մը, համբերատար հիւանդի մը վրայ:

Պ. — ՄԱՐՍԵՅԷԼ. — Եթէ ձեր բժիշկը ըսէ թէ բուժուած էք, խնդրեցէք որ վստահելի աշխատանոցի մը մէջ սերմի մշակում ընել տայ: Եթէ կօնօֆօֆ չգտնուի, կրնաք հանգիստ ըլլալ:

. . . ԱԼԷՔՍԱՆՏՐԷԹ. — «Էֆզէմա» կոչուած մորթային հիւանդութեան պատճառները բազմաթիւ են: Դուրսէն, ընդհանրապէս կուտը (*goudron*) եւ ամոր բաղադրութիւնները կը յաջողին բուժել. իսկ իբրեւ մերթին դարմանում՝ ենթակային արիւնին իրեն մերարկումը (*autohemotherapie*) կամ շոգադարմանումը յաճախ լաւ արդիւնք կուտան: Ամէն պարագայի, դարմանումը երկար է և յաճախ պէտք է ըլլայ շատ մը դարմաններ փորձել, լաւագոյնը գտնելու համար:

Ա. — ՊՈՒՐԿԱԶ. — Սրբանի պալարները երբ ինֆնարեաբար կը բացուին, յաճախ չեն գոցուիր, թարախը կը շարունակէ ծորիլ այդ բացուածքէն որ *fistule* կը կոչուի. գրեթէ միայն գործողութեամբ կարելի է բուժել, այն ալ 1-2 ամիսէն, մարտար վիրաբոյժի մը ձեռքով: — Դալուկի (*ictère, jaunisse, սարլըզ*) տեսակները եւ պատճառները բազմազան են: Սովորական, պարզ ձեւը 2-3 շաբաթէն կ'անցնի. պառաւական դեղերը ոեւէ ազդեցութիւն չունին ամոր ընթացքին վրայ: — Այն ինչ որ ժողովրդական դեղեր կ'անուանէք, հին բժիշկներու գործածած դեղերն են՝ դարմաններն են, որոնք հետզհետէ կատարելագործուած կամ լքուած են իբրեւ ամբաւական կամ ոչ-ազդեցիկ: Այդ լքուած դեղերն ու դարմաններն են — որոնց կարգին մէզը եւ մոյնիսկ կզկզանքը — զորս պառաւները կը շարունակեն գործածել, գրեթէ միշտ ի վնաս հիւանդներուն: Այս առթիւ ձեր խորհրդածութիւնները տգիտութեան արդիւնք են:

Գ. Վ. — ԼԻՕՆ. — Մերթ ընդ մերթ՝ վնասակար չէ. ձեր կազմէն կախում ունի: Այսուհանդերձ կարելի է դաժ չափով պէտք է զգուշանալ: